



Առաջարկություններ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծերի վերաբերյալ:

2019 թվականի նոյեմբերի 19-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <https://www.e-draft.am> կայքում հրապարակվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծեր: Նախագծերով առաջարկվում են մի շարք փոփոխություններ, որոնք մտահոգությունների տեղիք են տալիս: Այսպես.

1. «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ նաև՝ Նախագիծ) առաջարկվում է, որ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնական պարտականություններն ստանձնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում նոտարական կարգով վավերացված լիազորագիր՝ իրենց անունից, Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան բանկերին, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպություններին հարցումներ ուղղելու, իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

Առաջարկվող փոփոխությունը խնդրահարույց է իրավաչափության տեսանկյունից հետևյալ պատճառներով՝

1.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ «1. Մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

3. Ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր նկատմամբ: Նա չի կարող գործարք կնքել նաև մեկ այլ անձի նկատմամբ, որի

ներկայացուցիչն է միաժամանակ, բացառությամբ առևտրային ներկայացուցչության դեպքի»:

Նույն օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ՝

ա) լիազորագիրը ներկայացվողի կամահայտնությունն է երրորդ անձանց առջև ներկայացվելու համար,

բ) լիազորագրի հիման վրա կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար,

գ) արգելվում է ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ ներկայացուցչի նկատմամբ (տե՛ս 2008 թվականի մարտի 27-ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-192 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը),

դ) ներկայացուցիչը լիազորագրի հիման վրա գործարքներ կնքում է ի շահ ներկայացվողի:

Սրան հակառակ առաջարկվող փոփոխությամբ՝

ա) վերացվում է լիազորագրի համար պարտադիր բաղադրատարր համարվող ներկայացվողի կամահայտնությունը. ներկայացվողի կողմից լիազորագիր տալը դառնում է օրենքով սահմանված պարտադիր պահանջ:

բ) Լիազորագրի հիման վրա հարցմամբ ստացվող տեղեկատվությունը իրավունքներ և պարտականություններ ստեղծելու է անմիջականորեն ներկայացուցչի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար. ստացված տեղեկատվությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնելու է օրենքով սահմանված իր գործառնությունները:

գ) Փաստորեն ներկայացվողի անունից կատարված հարցումները և ստացված տեղեկատվությունը լինելու է ոչ թե ներկայացվողի, այլ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառնությունների իրականացման համար:

դ) Ներկայացուցիչը (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը) լիազորագրի հիման վրա ՀՀ-ում և արտասահմանում ստուգելու և բացահայտելու է ներկայացվողի անշարժ և շարժական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, այսինքն՝ ներկայացուցիչը գործելու է ոչ թե ի շահ ներկայացվողի, այլ հաճախ հենց ի վնաս նրա:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունը խեղաթյուրում է լիազորագրի բուն էությունը և հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ներկայացուցչությանը տրված իրավակարգավորումներին:

1.2. Բացի այդ, առաջարկվող փոփոխությունը խնդրահարույց է նաև կիրառելիության տեսանկյունից: Այսպես.

ա) առաջարկվող փոփոխությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հայտարարատու պաշտոնատար անձի կողմից տրված լիազորագրի հիման վրա տեղեկատվություն է ստանալու Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան բանկերում, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպություններում վերջինիս հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի մասին: Այսպիսով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հասանելի են դառնալու նաև երրորդ անձանց բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները հայտարարատու պաշտոնատար անձի բանկային փոխանցումների և այլ գործառնական տվյալների բացահայտման ընթացքում: Այս համատեքստում խաթարվելու է ոչ միայն հայտարարատու պաշտոնատար անձանց, այլև երրորդ անձանց մասնավորության ակնկալիքը, ուստի մասնավոր կյանքի պաշտպանության իրավաչափ անհրաժեշտությունը դառնալու է պատրանքային:

բ) Հասկանալի չէ, թե ինչպես են հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից տրված լիազորագրի հիման վրա հարցումներ կատարելու և տեղեկատվություն ստանալու արտասահմանյան բանկերից և ֆինանսական կազմակերպություններից այն պարագայում, երբ տարբեր երկրներում տարբեր պահանջներ են սահմանված լիազորագրի նկատմամբ:

գ) Նախագծով լիազորագիրը չունի որոշակիության աստիճան. հստակ սահմանված չեն այն սահմանները, որոնց շրջանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը լիազորություն կունենա գործելու:

դ) Նախագծով չի սահմանվում, թե ինչ լեզվով կամ լեզուներով պետք է լինի լիազորագիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն պետք է ներկայացվի և ընդունելի լինի նաև արտասահմանյան բանկերում և ֆինանսական կազմակերպություններում:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունը կիրառելիության առումով ևս ունի խնդրահարույց հարցեր և անհստակություններ:

2. Նախագծով առաջարկվում է, որ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը.

1) Հանգստի կամ զվարճանքի համար կատարված՝ 300 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող ծախսերը.

3) 300 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող վարկը.

6) անշարժ և շարժական գույքի պահպանման, վերանորոգման առնչությամբ կատարված՝ 300 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող ծախսերը:

Առաջարկվող փոփոխությունը պարունակում է մի շարք անհստակություններ: Այսպես.

ա) Նախագծի հիմնավորումներում ներկայացված չէ, թե ինչ սկզբունքով և հաշվարկներով է որոշվել հենց 300 000 ՀՀ դրամի շեմը:

բ) Հստակ չէ, թե ե՞րբ ու ո՞ր դեպքում է համարվում 300 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող ծախսը հայտարարագրման ենթակա: Մասնավորապես խոսքը վերաբերվում է մեկ տարվա կամ մեկ ամսվա ընթացքում 300 000 ՀՀ դրամի շեմը գերազանցող ծախսին, թե մեկ անգամվա զվարճանքի կամ անշարժ գույքի վերանորոգման համար կատարված 300 000 ՀՀ դրամի շեմը գերազանցող ծախսին: Այս համատեքստում հարց է առաջանում, եթե առաջին դեպքում անձը զվարճանքի կամ անշարժ գույքի վերանորոգման համար կատարում է 300 000 ՀՀ դրամի շեմը գերազանցող ծախս մեկ անգամ տարվա ընթացքում, իսկ երկրորդ դեպքում անձը ամեն ամիս է կատարում 100 000 ՀՀ դրամին համարժեք ծախս, ապա ո՞ր դեպքում է ծախսը ենթակա հայտարարագրման:

Այսպիսով գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և անհրաժեշտություն կա առավել հստակ սահմանել ծախսերի հայտարարագրման օրենսդրական պահանջը:

3. Նախագծով առաջարկվում է օրենքի 40-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով, որով սահմանվում է, որ հայտարարագիրը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում կամ այլ երկրում առկա և հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ապա նաև նոր լրացվող 1.2 մասով տրվում է «փաստացի տիրապետվող» հասկացության նշանակությունը, համաձայն որի՝ հայտարարատուին վարձակալության, անհատույց օգտագործման, ցանկացած այլ գույքային իրավունքով պատկանող, կամ իր խնամակալության կամ հոգաբարձության պարտականությունները կատարելու հետ կապված գույքը համարվում է փաստացի տիրապետվող:

Ինչպես կարող ենք նկատել վերոգրյալից, փաստացի տիրապետվող գույքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված տիրապետման կամ օգտագործման իրավունքով պատկանող գույքն է, այսինքն՝ առաջարկվող փոփոխությամբ նոր հասկացություն չի ներմուծվել: Այս համատեքստում անհասկանալի է, թե ինչու է Նախագծով ներմուծվում նոր հասկացություն, այդպիսով նաև օրենքը ծանրաբեռնվում դրա հասկացության բացահայտմամբ այն պարագայում, երբ Օրենսդիրը նախատեսել է սեփականության իրավունքի այդ ձևերի ձևակերպումները:

4. Նախագծով առաջարկվում է, որ հայտարարագրում ներառվի Հայաստանի Հանրապետության տարածքում կամ այլ երկրում առկա և հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող սույն մասի 1-5-րդ կետերում չնշված՝ հինգ միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք):

Այս պարագայում ևս Նախագծի հիմնավորումներում ներկայացված չէ, թե ինչ սկզբունքով ու հաշվարկներով է որոշվել հինգ միլիոն դրամի շեմը: Գտնում ենք, որ այն բարձր շեմ է և անհրաժեշտ է սահմանել ավելի ցածր շեմ: